

ՆԱՍԻՐ ԽՈՍՐՈՎԻ «ՍԱՖԱՐ ՆԱՄԵՆ»՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՋՔՆԱՂՐՅՈՒՐ

Պարսից գրականության և փիլիսոփայական մտքի մեծանուն ներկայացուցիչ, իմաստասեր աղանդի ճանաչված քարոզիչ Աբու Մուսի էզ-դին Նասեր իբն Խոսրովը (1003—1088/1089) 1045 թ. ուխտագնացության է ուղևորվել Մեքքա, Ուղևորությունը տևել է մետ յոթ տարի, Այդ ընթացքում նա եղել է Ատրպատականում, Հայաստանում, Սիրիայում, Պաղեստինում, Եգիպտոսում, Հեջազում և, ի վերջո, հարավային Իրանով վերադարձել է Բալխի նրա «Սաֆար Նամեն» այս ճանապարհորդությունից ստացած տպավորությունների արդյունքն է։

Նասեր Խոսրովի դեռ առաջին ուսումնասիրողները Նշել են «Սաֆար Նամեի» ճանաչողական մեծ արժեքը, Անցյալ դարի 80-ական թվականներին Ֆրանսիացի հայտնի աբենդազետ Շեֆերը հրատարակել է «Սաֆար Նամեի» բնագիրը և ֆրանսերեն թարգմանությունը¹, Որոշ համվածներ թարգմանել է նաև անգլիացի իրանագետ է. Բրաունը², 1933 թ. լույս է տեսել «Սաֆար Նամեի» ռուսերեն թարգմանությունը³ է. Բերտելսի աշխատասիրությամբ⁴։

Ստորև հրապարակում ենք «Սաֆար Նամեի» Հայաստանի և Ատրպատականի վերաբերող հատվածը՝ համապատասխան ծանոթագրություններով, վեր հանելով նրա արդյուրագրական արժանիքները, Թարգմանությունը կատարել ենք 1890 թ. Թավրիզում լիտոգրաֆիական եղանակով հրատարակված բնագրից. **سياحت نامه ناصر خسرو علوی** Նշենք, որ մինչ այժմ

«Սաֆար Նամեի» քննական անցյալը չի հրատարակվել և մեր օգտագործած բնագիրը որոշ տարբերություններ ու տարբերություններ ունի վերոհիշյալ հրատարակությունների համեմատությամբ։

ՎԱՆԱ ՓԱՓԱՅԱՆ

Նասեր Խոսրով

«Սաֆար Նամե»

(Հանապարհորդության գիրք)

... Մուհամմադ 26-ին¹ Շեմիրանից² մեկնեցի և սաֆարի 14-ին³ հասա Սարաբ⁴ քաղաքը։

Սարաբից մեկնեցի սաֆարի 16-ին⁵, անցա Սաիդարադով և 438 թ. սաֆարի 20-ին⁶ հասա Թավրիզ քաղաքը, Դա հին տոմարով շահրիվար⁷ ամսի 5-ին էր, Այս քաղաքը Ազերբայջանի աթոռանիստ քաղաքն է, շին քաղաք է, Հայնությունն ու երկարությունը քալով լափեցի, յուրաքանչյուրը 1400 [բայլ] էր⁸, Ազերբայջանի մարզի թաղավորին խութթայի⁹ մեջ այսպես են հիշում. «Փառապանծ էմիր, պետության թուր և հավատացյալների պատիվ, Աբու-Մանսուր վեհապետն իբն-Մուհամմադ, ուղղափառների տիրոջ մտերիմը», Ինձ պատմեցին, որ այս քաղաքում երկրաշարժ է եղել 434 թ. ռաբի 1-ի 17-ին¹⁰, լույս հինգշաբթի գիշերը, հավելյալ օրերին¹¹, երեկոյան աղոթքից

¹ Nasir-i Khusraw, Safar Nameh, trans, Schefer, Paris. 1881.

² E. G. Browne, A Literary History of Persia, vol. II, From Firdawsy to Sa'di, Cambridge, 1956.

³ Насир-и Хусрав, Сафар-Наме, пер. Е. Э. Бертельса, М.—Л., 1933.

հետո: Քաղաքի մի մասը ավերվել էր, իսկ մյուս մասը չէր վնասվել: Թավրիզում հանդիպեցի Կաթրան¹² անունով մի բանաստեղծի. նա գեղեցիկ բանաստեղծություններ էր գրում, սակայն պարսկերեն լավ չգիտեր¹³: Եկավ ինձ մոտ և բերեց Մանջիկի¹⁴ ու Դակիկի¹⁵ դիվանները. կարդաց, և ինչ որ իր համար դժվար էր, ինձ հարցրեց, և ես նրան ասացի, իսկ նա իմ բացատրությունները իր մոտ գրեց և հետո իր բանաստեղծությունները ինձ համար կարդաց:

Ռաբի՝ 1 ամսի 14-ին¹⁶ մենք ճանապարհ ընկանք Թավրիզից, Մարանդի վրայով, Ամիր Վահսուդանի զինվորների հետ և հասանք Խոյ: Այստեղից, նորից ղեսպանության հետ¹⁷, գնացի մինչև Բերկրի. Խոյից մինչև Բերկրի 30 ֆարսանգ է¹⁸, Մենք այնտեղ հասանք ջումադի 1-ի 12-ին¹⁹, ցերեկը, իսկ այնտեղից գնացինք Վան և Ուստան: Տեղի շուկայում խոզի միսը վաճառում էին այնպես, ինչպես ուխտարի միսն են վաճառում, իսկ կանայք ու տղամարդիկ խանութներում նստած գինի էին խմում, առանց քաշվելու²⁰:

Այդտեղից էլ ջումադի 1-ի 18-ին²¹ եկա Ախլաթ [Խլաթ] քաղաքը: Այս քաղաքը մուսուլմանների ու հայերի սահմանն է: Բերկրիից մինչև այստեղ 19 ֆարսանգ է: Այստեղ մի էմիր կար, որին կոչում էին Նասր-ուդ-դավլե, տարիքը հարյուրից անց կլիներ, շատ որդիներ ուներ և ամեն մեկին մի գավառ էր տվել: Ախլաթ քաղաքում խոտում են երեք լեզվով՝ արաբերեն, պարսկերեն և հայերեն: Կարծում եմ, որ սրա համար էլ քաղաքը կոչվել է Ախլաթ²²: Առևտուրն այստեղ պղնձն զրամով²³ է կատարվում, և նրանց ռաթլը²⁴ 300 զրամ է²⁵:

Ջումադի 1-ի 20-ին²⁶ այստեղից մեկնեցի և հասա մի իշկան: Սաստիկ ձյուն էր և ցուրտ: Դաշտում, քաղաքի առջև, որոշ տարածության վրա, գետնին փայտեր էին ցցված, որպեսզի մարդիկ ձյունոտ և մառախլապատ օրերին զրանց հետքերով գնան:

Այնտեղից եկա Բիթլիս [Բաղեշ], որը տեղադրված էր ձորի մեջ: Մենք այնտեղ մեղր գնեցինք: Այն գնով, որ մեղրը մեզ վաճառեցին, 100 մանե²⁷ մեկ դինար²⁸ ստացվեց: Ասացին, որ այս քաղաքում կան մարդիկ, որոնք մեկ տարում 300—400 տիկ մեղրի բերք են ստանում:

Երբ այստեղից մեկնեցի, մի բերդ տեսա, որը կոչվում էր «Կուֆ ուն-զուր», որ նշանակում է «կանգնիր և նայիր»: Այստեղից անցա և հասա մի այլ տեղ, ուր առաջ մզկիթ էր եղել: Ասում էին, որ Ուվեյս Կարանին²⁹ է կառուցել—աստված հոգին լուսավորի:

Այս կողմերում ես տեսա մարդկանց, որոնք շրջում էին լեռան վրա և սոճու ծառի նման ինչ-որ փայտ էին կտրում. հարցրեցի նրանց.

— Սրանից ինչ էք պատրաստում:

Նրանք պատասխանեցին.

— Այս փայտի մի ծայրը դնում ենք կրակի մեջ և նրա մյուս ծայրից խեժ է դուրս գալիս: Բոլորը հավաքում ենք մի հորի մեջ և [կժեքրով]³⁰ տանում ամեն կողմ:

Այս մարդը, որ Ախլաթից հետո հիշվեց, և մենք այստեղ համառոտ պատմեցինք, մտնում է Միաֆարդինի մեջ³¹:

Այնտեղից գնացինք Արզն³² քաղաքը: Գեղեցիկ և շեն քաղաք էր, հոսող ջրերով և այգիներով, ընտիր ծառաստաններով և շուկաներով: Այնտեղ պար-

սից ազար³³ ամսին 200 ման խաղողը մեկ դինարով էին վաճառում: Այս խաղողը կոչում են «ռազ-ե արմանուշ» [արմանուշի որթ]³⁴:

Այնտեղից մենք եկանք Միաֆարդին: Ախլաթից մինչև Միաֆարդին 28 ֆարսանգ էր: Իսկ Բալխից³⁵ մինչև Միաֆարդին, այն ճանապարհով, որ մենք եկանք, 552 ֆարսանգ էր:

[Մենք Միաֆարդին հասանք] 438 թ. ջումադի I-ի 26-ին³⁶, ուրբաթ օրը: Այն ժամանակ ծառերի տերեւները դեռ կանաչ էին: [Քաղաքն] ուներ մի մեծ պարիսպ, կառուցված սպիտակ քարից: Յուրաքանչյուր քարը մոտ 500 ման [ծանրությամբ] և յուրաքանչյուր հիսուն գյազի³⁷ վրա մի աշտարակ էր կառուցված, նույն սպիտակ քարից: Իսկ պարսպի ծայրին ամբողջ ատամներ են դրված: [Դրանց նայելիս] թվում է, թե վարպետը հենց այսօր է իր գործը վերջացրել: Այս քաղաքն արևմտյան կողմից մի դարբաս ունի, մեծ քարե կամարով, իսկ դուռը պատրաստված է երկաթից, առանց փայտի: Քաղաքն ունի մայր մզկիթ, որը, եթե ուզենք նկարագրել, կարող է շատ երկարել: Բավական է ասել, որ միայն նրա լվացարանը³⁸ 40 առանձին սենյակ ունի և երկու մեծ ջրի առու անցնում են բոլոր սենյակների միջով: Մեկը բաց է գործածության համար, իսկ մյուսը՝ ծածկված է գետնի տակ, որը կեղտերն է տանում և մաքրում է հորերը:

[Վերահիշյալ] Շահրեսթանից [միջնաբերդ] դուրս կան իջևաններ, շուկաներ, բաղնիքներ և մի այլ մայր մզկիթ, որտեղ նմանապես ուրբաթ օրերին աղոթք են անում:

Հյուսիսային կողմից կա մի այլ արվարձան, որը կոչվում է Մուհադդասա: Սա նույնպես քաղաք է, շուկաներով, մայր մզկիթով և բարեկարգ բաղնիքներով: Այս մարզի սուլթանի անունը խուլթայի մեջ այսպես էին հիշում. «Մեծագույն էմիր, իսլամի փառք, հավատքի երջանկություն, պետության պահպան և ժողովրդի պատիվ՝ Աբու-Նասր Ահմադ»: Նա հարյուր տարեկան էր: Ասացին, որ այնտեղի ութը ռաթլը 480 դրամ է կշռում: Այս էմիրը քաղաք է կառուցել Միաֆարդինից 4 ֆարսանգ հեռավորության վրա, որը կոչվում է Նասիրիյի:

Միաֆարդինից Ամիգ ինը ֆարսանգ է: Հին տոմարով դեյ ամսի վեցերորդ օրը³⁹ հասանք Ամիգ: Քաղաքի հիմքը ընկած է մի միակտուր քարածայրի վրա: Այդ քաղաքի երկարությունը ու լայնությունը 2000-ական բալլ է⁴⁰, Շուրջը ամբողջ սև քարից մի պարիսպ է կառուցված: Քարերից յուրաքանչյուրը հարյուրից մինչև հազար և ավելի ման ծանրություն ունի: Այս քարերի երեսն այնպես է իրար միացված, որ դրանց արանքում ոչ կավ կա, ոչ կիր: Պարսպի բարձրությունը 20 արշ է⁴¹, իսկ լայնքը՝ 10 արշ: Յուրաքանչյուր 10 գյազի վրա կառուցված է մի աշտարակ, որի կիսաշրջանը 80 գյազ է: Պարսպի ատամնաշարը ևս նույն քարից է կառուցված: Քաղաքի ներսի կողմից շատ տեղերում քարե աստիճաններ են կառուցված, որոնցով կարելի է բարձրանալ պարսպի վրա: Աշտարակների վրա մարտիկների համար հարթակներ կան:

Քաղաքն ունի չորս դուռ, բոլորն էլ երկաթից, առանց փայտի, որոնցից յուրաքանչյուրը նայում է դեպի աշխարհի չորս կողմերից մեկը: Արևելյանը կոչվում է Բար-ալ-դաջա [Տիգրիսի դուռ], արևմտյանը՝ Բար-ալ-Ռում [Հու-

նաց դուռ]՝ հյուսիսայինը՝ Բաբ-ալ Արման [Հայոց դուռ], իսկ հարավայինը՝ Բաբ-ալ Թիլ [Թիլի դուռ]⁴²։

Այս պարսպից դուրս կա նաև մի այլ սյարիսպ, կառուցված նույն քարից, 10 գյազ բարձրությամբ. որի ամբողջ ծայրերը ստամանավոր են։ Այս ստամանների արանքից անցք է բացված, որոնցից լրիվ սպառազինված մարդը կարող է հեշտությամբ անցնել, կանգնել ու պատերազմել։ Դրսի պարսպին էլ երկաթե դռներ են դրված, որոնք, սակայն, ուղիղ ներքին դռների դիմաց չեն։ Այնպես որ, երբ անցնում են առաջին պարսպի դռներից, բավական տեղ պետք է անցնել երկու պարիսպների արանքով, հասնելու համար երկրորդ պարսպի դռան։ Այս երկու պարիսպների միջև եղած տարածության լայնքը 15 գյազ է։

Քաղաքի մեջ կա մոտ 5 ջրաղացի ջրի չափով մի աղբյուր, որը բխում է ապառաժ քարից և ունի չափազանց անուշահամ ջուր, որի ակունքները, սակայն, ոչ որք հայտնի չեն։ Քաղաքում կան այգիներ ու քանդարանոցներ, որոնք այս ջրով են ոռոգվում։ Քաղաքի էմիրն ու հաքիմը վերոհիշյալ նասրուդ-դովլեի որդին է։ Նա շատ քաղաքներ ու բերդեր է մտնել աշխարհի բոլոր կողմերում, արաբների ու պարսիկների, հնդիկների ու թուրքերի երկրներում, սակայն երկրի վրա և ոչ մի տեղ Ամիդի նման քաղաք չեմ տեսել և ոչ մեկից էլ չեմ լսել, որ այդպիսի քաղաք տեսած լինի։

Մայր մզկիթը ևս նույն սև քարից է կառուցված, որից ավելի ուղիղ ու ամուր դժվար թե լինի։ Մզկիթի մեջ բարձրանում են ավելի քան 200 միակտուր քարե սյուներ, որոնց վրա քարե կամարներ են կապված. այս կամարների վրա նույնպես մի քիչ ավելի կարճ քարե սյուներ են բարձրանում և նախորդ մեծ կամարների վրա ևս մի շարք կամարներ են կապված։ Այս մզկիթի բոլոր կտուրները ծածկված են առակապերով [աղյուսազմբթ] և բոլոր քարի ու փայտե մասերը նկարազարդված են և ներկված։

Մզկիթի բակում դրված է մի խոշոր քար, որի վրա կառուցված է մի քավական մեծ քարե կլոր ավազան, որի խորքը մեկ մարդաչափ է. իսկ շրջագիծը 2 գյազ։ Ավազանի կենտրոնում կա մի բրոնզե խողովակ, որից ցայտում է վճիտ ջրի մի շատրվան, այնպես, որ այս ջրի մուտքի և ելքի ճամփաները չեն երևում։

Մզկիթն ունի նաև մի մեծ լվացարան, որից ավելի լավը չի կարող լինել։ Միայն թե Ամիդում այն կառուցված է սև քարից, իսկ Միաֆարդինում՝ սպիտակ քարից։

Մզկիթի մոտ կա մի մեծ քարաշեն եկեղեցի, որի հատակը ծածկված է մարմարե սալերով, իսկ խորանի վրա, որը քրիստոնյաների աղոթատեղն է, տեսա մի երկաթե ցանցկեն դուռ, որի նմանը ոչ մի այլ տեղ չէի տեսել։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 1046 թ. օգոստոսի 3։

2. Փարսիկ քաղաք Իրանի մերձկասպյան Գիլանի նահանգում։

3. 1046 թ. օգոստոսի 21։

4. Քաղաք հարավային Ադրբեջանում՝ Արդաբիլից Քավբիլ տանող ճանապարհին։

5. 1046 թ. օգոստոսի 23։

6. 1046 թ. օգոստոսի 27։

7. Խոսքը հին իրանական արեգակնային տոմարի մասին է, Շահրիվար ամիսը համապատասխանում է օգոստոս և սեպտեմբեր ամիսներին:

8. Խոսքը, հավանաբար, չահրեսթանի մասին է, այսինքն՝ քաղաքի այն մասի, որը շրջափակված է պարսպով:

9. Մուսուլմանական կրոնական արարողություն մզկիթում, որի ընթացքում հիշատակվում է նրկրի վեհապետի կամ իշխանի անունը:

10. 1042 թ. ղեկտեմբերի 5:

11. Հին իրանական արեգակնային տարին հայոց հին տարեթվի նման ուներ 12 ամիս, յուրաքանչյուրը 30 օր և հավելյալ 5 կամ 6 օր, որը կոչվում էր «մուսթարիկա»՝ հավելյալ:

12. Արու-Մանսուր Կաթրան Թավրիզեցին (?—1072) պարսից գրականության ակնառու դեմքերից է:

13. Խոսքը ժամանակի գրական լեզվի դարի պարսկերենի մասին է, Հավանաթար 11-րդ դարում Ազերբայջանում [Ատրպատականում] ղեռ գործածական էր իրանական այլ խոսվածք:

14. Սուլթան Մահմադ Վաղնավի պալատական բանաստեղծներից:

15. Արու-Մանսուր Մուհամմադ իբն-Ահմադ Դակիկի: Մամանյան արքաների պալատական նշանավոր բանաստեղծներից, որը առաջինը փորձեց գրել «Շահնամեն», սակայն հաջիվ հազար տղ էր գրել, երբ սպանվեց իր ստրուկի ձեռքով:

16. 1046 թ. սեպտեմբերի 19:

17. Խոսքը վերաբերում է Հմիրի ղեկավորներին:

18. Մեկ ֆուստանը հավասար է 5752,8 մետրի:

19. 1046 թ. նոյեմբերի 1:

20. Մուսուլմանական օրենքով խոզը համարվում է պիղծ կենդանի. հետևաբար, միսը չեն ուտում. հավատացյալների արգելվում է նաև ոգելից խմիչքների գործածությունը: Այս է պատճառը, որ Նասեր Խոսրովը հատկապես նշում է այդ փաստը:

1046 թ. վերաբերող այս տեղեկություններն արժանի են հատուկ ուշադրության, որքանով, որ դրանք վերաբերում են Սենեքերիմ արքայի և Վասպուրականի հայ ժողովրդի գաղթին հաջորդած տասնամյակներին: Ըստ Սենեքերիմի և Բյուզանդիո Վասիլ II կայսեր կնքած պայմանագրի, Սենեքերիմը վերջինիս հանձնելու էր Վասպուրականի թագավորությունը և փոխարենը ստանալու էր Սերաստիա քաղաքն՝ իր շրջակա գավառներով: Դրանով խափանվում էին Անիի թագավորության՝ Հայաստանը մի ամբողջական, միասնական պետության մեջ միավորելու քանքերը: Սենեքերիմի հետ պետք է գաղթի և հայ բնակչությունը, եղի միս ուտել և բուրդին ի տես գինի խմել կարող էին միայն քրիստոնյաները, տվյալ դեպքում՝ հայերը: Ուրեմն, 1021 թ. գաղթից հետո հայերը վանում և Ոստանում ճնշող մեծամասնություն էին կազմում:

21. 1046 թ. նոյեմբերի 7:

22. Ախլաթ արաբերեն նշանակում է խառնուրդ:

23. Բնագրի «փուլ» բառը պետք է հասկանալ «փող», ոչ ազնիվ մետաղե գրամ (Բերտեկը թարգմանում է «медные деньги»):

24. Ռաթր ծանրության, ինչպես նաև ծալայի չափ է, որը փոփոխական է եղել ըստ տեղի և ժամանակի:

25. Իրամ կամ դիրհամ, ծանրության չափ է, միաժամանակ և արծաթ դրամ՝ 3,138 գր ծանրությամբ:

26. 1046 թ. նոյեմբերի 9:

27. Մանը ամենատարածված քաշի միավորներից էր. XV—XIX դդ. մանը 3 կգ էր, որը, սովորաբար, անվանվում էր «Թավրիզի ման»:

28. Ոսկե դրամ՝ 4,25 գր:

29. Մարգարեի մերձավորներից:

30. Թավրիզի հրատարակության մեջ բացակայում է «կեծերով» բառը: Այն լրացրել ենք ըստ Բերտեկի թարգմանության:

31. Պատմական Հայաստանի Տիգրանակերտ կամ Նիբեկերտ քաղաքը:

32. Գտնվում էր Բիթլիս-Միաֆարդին ճանապարհի վրա:

33. Իրանական արեգակնային տարվա 9-րդ ամիսը [նոյեմբեր-դեկտեմբեր]:

34. Թավրիզի հրատարակության մեջ բացակայում է խաղողի անվանումը: Այն լրացված է ըստ վերոհիշյալ ռուսերեն թարգմանության:

35. Խորասանի հնագույն քաղաքներից. այժմյան Մեղար-ն Շարիֆ քաղաքի մոտ [Հյուսիսային Աֆղանստանում]:

36. 1046 թ. նայեմբերի 23:

37. Երկարության չափ, մոտավորապես 1,25 մ:

38. Մուսուլմանների աղոթքից առաջ կատարվող լվացումների արարողության հատուկ վայր:

39. Իրանական արեղակնային տարվա 10-րդ ամիսը [դեկտեմբեր-հունվար]. 1046 թ. դեկտեմբերի 22:

40. Խոսքը շա:րհսթանի մասին է:

41. Բարձրության չափ՝ մոտ 45—50 սմ:

42. Բառացի նշանակում է «Բլրի դռն»: Հավանաբար, դեպի Թիլ կամ Թիլրաշար քաղաքը տանող ճամփան այստեղից է սկսվել: